

ՀԱՐՑԱՇԱՐ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԱԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ «ՄԱՆԿՎԱՐԺՈՒԹՅԱՆ» ՔՆՆՈՒԹՅԱՆ

1. Մանկավարժությունը որպես հումանիտար գիտություն:
2. Մանկավարժության տեսության ձևավորման ու զարգացման սոցիալ-տնտեսական նախադրյալները:
3. Մանկավարժության օբյեկտի և առարկայի առանձնահատկությունները: Մանկավարժության հիմնական գործառույթները:
4. Մանկավարժության հիմնական հասկացությունները՝ կրթություն, ուսուցում, դաստիարակություն:
5. Մանկավարժական գիտությունների համակարգը և մանկավարժության կապը այլ գիտությունների հետ:
6. Գիտամանկավարժական հետազոտման մեթոդները՝ տեսական և գիտագործնական մեթոդներ:
7. Անձի զարգացումը՝ որպես մանկավարժական հիմնախնդիր: Անձի ձևավորման գործոնները և պայմանները:
8. Անձի դաստիարակության և ձևավորման առանձնահատկությունները: Սոցիալականացման էությունը:
9. Ուսուցման դերը անձի զարգացման գործում:
10. Տարբեր տարիքի սովորողների անհատական առանձնահատկությունները:
11. Անձի սոցիալականացման տարբերակված մոտեցումը: Անձի սոցիալականացման փուլերը:
12. «Մանկավարժական համակարգ» հասկացությունը: Մանկավարժական համակարգերի տեսակները:
13. Մանկավարժական գործընթացը որպես ամբողջական երևույթ դիտարկելու, համակարգելու պատմական նախադրյալները:
14. Մանկավարժական համագործակցություն. ուսուցման և դաստիարակության գործընթացի յուրահատկությունները: Մանկավարժական գործընթացի բաղադրամասերը:

15. Մանկավարժական գործընթացի նախագծման և իրականացման տեխնոլոգիաները: Մանկավարժական գործընթացը որպես նրա մասնակիցների երկխոսություն, համագործակցություն, համաստեղծագործություն:
16. Դիդակտիկան որպես ուսուցման տեսություն: Դիդակտիկայի զարգացման պատմական նախադրյալները:
17. Դիդակտիկայի օբյեկտը, առարկան և խնդիրները:
18. Դիդակտիկայի հիմնական հասկացությունները: «Ուսուցում», «կրթություն», «կրթության բովանդակություն» հասկացությունների բնութագրերը:
19. Կրթության բովանդակության պատմական բնույթը և զարգացման ժամանակակից միտումները:
20. Կրթության բովանդակության գիտական հիմունքները, ձևավորման աղբյուրները և ընտրության սկզբունքները:
21. Կրթության բովանդակությունն արտահայտող հիմնական փաստաթղթերը: Միջնակարգ հանրակրթական դպրոցի ուսումնական պլան, ծրագրեր, դասագրքեր, ձեռնարկներ:
22. «Կրթության մասին» ՀՀ օրենքը: ՀՀ նոր պետական կրթակարգը: Կրթական չափորոշիչներ:
23. Ուսուցման գործընթացի էությունը:
24. Ուսուցման տեսության մեթոդաբանական հիմքերը:
25. Ուսուցման օրենքներն ու օրինաչափությունները:
26. Ուսուցման սկզբունքները:
27. Ուսուցումը որպես ամբողջական համակարգ:
28. Ուսուցման գործընթացի հիմնական բաղադրամասերը՝ նպատակային, պահանջմունքային-դրդապատճառային, բովանդակային, գործունային-ընթացակարգային, զգայական-կամային, վերահսկող-կարգավորող, գնահատող-ամփոփող:
29. Ուսուցման գործընթացի գործառույթները՝ կրթական, զարգացնող, դաստիարակող, մոտիվացնող:

30. Ուսուցման գործընթացի տեսակները՝ պայմանական, պրոբլեմային, ծրագրավորված, համակարգչային, համակազմային, մոդուլային:
31. Հասկացողություն ուսուցման մեթոդի և հնարի մասին: Ուսուցման մեթոդների դասակարգման մոտեցումները:
32. Ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման մեթոդները: Ուսումնաճանաչողական գործունեության արդյունավետության վերահսկողության և ինքնահսկողության համապարփակ բնութագիրը:
33. Ուսուցման մեթոդների ընտրությունը: Ուսուցչի մեթոդական զինանոցը:
34. Ուսուցման միջոցները: Ուսուցման միջոցների դասակարգումը և բնութագիրը:
35. Ուսուցման խոսքային, գործնական և զննական մեթոդներ:
36. Ուսուցման մեթոդների կիրառության ակտիվ և ինտերակտիվ եղանակներ:
37. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն ուսուցման գործընթացում:
38. Համագործակցային, ալգորիթմացված և ծրագրավորված, պրոբլեմային, տարբերակված, մոդուլային, նախագծային ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ:
39. Ուսուցման կազմակերպման ձևերը: Ուսուցման ձևերի բազմազանությունը: Ուսուցման կազմակերպման ֆրոնտալ, խմբային, կոլեկտիվ, անհատական ձևերը:
40. Անհատական, անհատականացված, փոխադարձ, զանգվածային ուսուցման համակարգը և դրա զարգացումը դիդակտիկայում: Տարբերակված ուսուցում:
41. Ուսուցման դաս-դասարանային համակարգը, դրա առաջացման և զարգացման պատմությունը:
42. Դասը՝ որպես ուսուցման կազմակերպման հիմնական ձև: Դասի էությունը, դասի տիպաբանությունն ու կառուցվածքը:
43. Դասին ներկայացվող ժամանակակից պահանջները: Դասի գործառույթների իրականացման ուղիները /կրթական, դաստիարակչական, զարգացնող, մոտիվացնող/:

44. Դասի կապը ուսուցման այլ ձևերի հետ /լաբորատոր պարապմունքներ, պրակտիկում, սեմինար, ֆակուլտատիվ, տնային աշխատանք/:
45. Դասի կազմակերպման ոչ ստանդարտ ձևերը:
46. Ուսուցչի նախապատրաստվելը դասին: Դասի պլանավորումը: Դասի վերլուծություն և գնահատում և ինքնագնահատում:
47. Գիտելիքների ստուգման և գնահատման տեղը և գործառույթները ուսումնական գործընթացում, դրանց օբյեկտիվության վրա ազդող գործոնները:
48. Ուսումնական արդյունքների ստուգմանը և գնահատմանը ներկայացվող պահանջները, ձևերն ու մեթոդներ, տեսակները: Ուսումնական գործունեության արդյունքների վերլուծությունը:
49. Դաստիարակությունը որպես հասարակական-մանկավարժական երևույթ, նրա առանձնահատկությունները և կառուցվածքը և ձևավորման փուլերը:
50. Դաստիարակության գործընթացի ընդհանուր օրինաչափությունները և շարժիչ ուժերը:
51. Երեխայի ակտիվության ձևավորումը: Հաջողության իրադրության ստեղծումը:
52. Դաստիարակության սկզբունքները: Դաստիարակության սկզբունքների և օրինաչափությունների հարաբերակցությունը: Դաստիարակության հիմնական սկզբունքների բնութագիրը:
53. Ինքնակատարելագործման ուղիները և մեթոդները: Ինքնադաստիարակության մեթոդները: Ինքնաճանաչողության մեթոդներն ու հնարները: Սովորողների ինքնադաստիարակության մեթոդներն ու հնարները:
54. Դաստիարակության և ինքնադաստիարակության հայեցակարգերը:
55. Դաստիարակության սկզբունքների առանձնահատուկ բնույթը: Դաստիարակության սկզբունքների բնութագրումը:
56. Դաստիարակության մեթոդները և հնարները:
57. Անձի գիտակցության ձևավորման, գործունեության կազմակերպման և հասարակական վարքի ձևավորման, վարքի խթանման մեթոդներ:

58. Մանկավարժական պահանջը և նրա տեսակները: Հասարակական կարծիքը որպես մանկավարժական պահանջի ձև:
59. Դաստիարակչական իրադրությունների ստեղծում: Խթանման մեթոդներ: Պատժի և խրախուսանքի մեթոդներ:
60. Դաստիարակության միջոցների բազմազանությունը: Դաստիարակչական աշխատանքի ձևերի ընդհանուր բնութագիրը:
61. Աշակերտական կոլեկտիվի կառուցվածքը հանրակրթական դպրոցում: Կոլեկտիվի զարգացման դինամիկան և փուլերը:
62. Կոլեկտիվի ձևավորման ուղիները: Կոլեկտիվ գործունեություն և ինքնակառավարում:
63. Անձի դաստիարակությունը կոլեկտիվում: Աշակերտական կոլեկտիվի ղեկավարման առանձնահատկությունները:
64. Ընտանիքը որպես դաստիարակության միջավայր, նրա ազդեցությունը անձի դաստիարակության գործընթացի և արդյունքների վրա:
65. Ընտանիքի և դպրոցի փոխգործունեության ձևերը: Ընտանեկան դաստիարակության արդյունավետության բարձրացման պայմանները:
66. Մտավոր դաստիարակության նպատակը, բովանդակությունը և խնդիրները:
67. Մտավոր դաստիարակության իրականացման մանկավարժական պայմանները:
68. Մտավոր ընդունակությունների զարգացման մեթոդները և միջոցները:
69. Աշխարհայացքի էությունը, կառուցվածքը և գործառույթները: Անձի աշխարհայացքը որպես սոցիալական կողմնորոշման անձնային դիրքորոշման և քաղաքացիական վարքագծի հիմք:
70. Դպրոցականի գիտական աշխարհայացքի ձևավորման հիմնական ուղիները և միջոցները:
71. Գիտական աշխարհայացքի ձևավորման տարիքային առանձնահատկությունները:
72. Հասկացողություն բարոյականության մասին: Բարոյական դաստիարակության նպատակը, խնդիրները, բովանդակությունը:

73. Բարոյագիտությունը որպէս բարոյական դաստիարակության տեսության և պրակտիկայի մեթոդաբանական հիմք: Բարոյական դաստիարակության հասկացությունները, բարոյական գիտակցություն, բարոյական գործունեություն, բարոյական հարաբերություններ և վարքագիծ:
74. Անձի բարոյական մշակույթի էությունը՝ զգայական ոլորտի, բարոյական գաղափարների, պահանջումների, արժեքային համակարգի զարգացվածությունը:
75. Զգայական ոլորտի, բարոյական գաղափարների, պահանջումների, արժեքային համակարգի, բարոյական ընտրության և սովորույթների հումանացման պայմանները:
76. Բարոյական անձի էությունը: Բարոյական անձի օրգանական կապը նրա զգացումների, խղճի, վարքի ինքնագնահատման հետ:
77. Խիղճը և խոստովանությունը որպէս բարոյական զարգացման և ինքնակատարելագործման խթան:
78. Իրավական դաստիարակության նպատակը, խնդիրները: Իրավական դաստիարակության համակարգը՝ իրավական մշակույթ, իրավական գրագիտություն, իրավական մտածողության զարգացում, իրավական գիտելիքներ:
79. Դպրոցականների իրավական դաստիարակության մանկավարժական պայմանները:
80. Գեղագիտական դաստիարակության էությունը, խնդիրները և բովանդակությունը: Գեղագիտական դաստիարակության դերը անձի զարգացման գործում:
81. Անձի գեղագիտական մշակույթի կառուցվածքը՝ գեղագիտական պահանջումք, գեղագիտական գիտելիք, արժեքային կողմնորոշում, գեղագիտական զգացումք, ճաշակ, գեղագիտական իդէալ:
82. Գեղագիտական մշակույթի ձևավորման ուղիները և մեթոդները հանրակրթական դպրոցում:
83. Քաղաքացիական դաստիարակության նպատակը, խնդիրները: Քաղաքացիականության կառուցվածքը՝ սեփական արժանապատվության

զգացում, հարենասիրություն, ազգային ինքնագիտակցություն, հարգանք իր երկրի քաղաքացու նկատմամբ, պարտականությունների կատարում:

84. Քաղաքական մշակույթի դաստիարակումը որպես քաղաքացիական դաստիարակության բաղադրիչ: Քաղաքական մշակույթի ցուցանիշները՝ քաղաքական գրագիտություն, քաղաքական գիտակցություն, հասարակական ակտիվություն, գործնական մասնակցություն ինքնակառավարման մարմինների գործունեությանը:
85. Հայրենասիրությունը որպես քաղաքացիական դաստիարակության կարևոր բաղադրիչ:
86. Աշխատանքային դաստիարակության բովանդակությունը դպրոցում, նպատակը, խնդիրները, էությունը:
87. Աշխատանքային դաստիարակության համակարգը դպրոցում: Դասարանական և արտադրական աշխատանքի հանրօգուտ գործունեության կազմակերպումը դպրոցում:
88. Մասնագիտական կողմնորոշման համակարգը՝ մասնագիտական կրթվածություն, մասնագիտության նախագծում, մասնագիտական կողմնորոշում, մասնագիտության ընտրություն:
89. Անձի ֆիզիկական դաստիարակության բովանդակությունը, միջոցները:
90. Էկոլոգիական դաստիարակության տեղը դաստիարակության ընդհանուր գործընթացում: Էկոլոգիական դաստիարակության բովանդակությունը հանրակրթական դպրոցում:
91. Էկոլոգիական դաստիարակության խնդիրները, ձևերը, մեթոդներն ու միջոցները:
92. Կրթության և մանկավարժական մտքի պատմության առարկան, աղբյուրները, մեթոդները, խնդիրները:
93. Դաստիարակության ծագումը: Կրթության և մանկավարժական միտքը հին աշխարհում: Ժողովրդական մանկավարժության դերը մանկավարժական մտքի ձևավորման և զարգացման գործում: Դաստիարակության ձևերը նախնադարում:

94. Առաջին կրթադաստիարակչական համակարգերի ձևավորումը: Դպրոցը և դաստիարակությունը Հին Արևելքի երկրներում՝ Շումեր, Աքքադիա, Եգիպտոս, Բաբելոն, Չինաստան, Ասորեստան, Պարսկաստան, Հայաստան: Առաջին հիշատակումներ դպրոցի ծագման և զարգացման վերաբերյալ:
95. Կրթությունը հին աշխարհում (Աթենք և Սպարտա), Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի, Դեմոկրիտի մանկավարժական գործունեությունն ու հայացքները:
96. Դաստիարակությունը Հին Հռոմում: Մարկ Ֆաբի Քվինթիլիանոսի մանկավարժական հայացքները:
97. Դաստիարակությունը նախաքրիստոնեական շրջանի Հայաստանում (հին ժամանակներից մինչև մ.թ. 4-րդ դ. վերջ):
98. Կրթությունը և մանկավարժական միտքը միջնադարում՝ Եվրոպայում:
99. Շերտավորված կրթության բնութագիրը միջին դարերում: Ասպետական դաստիարակություն: Եկեղեցիական դպրոցներ:
100. Աստվածաբանական դպրոցներ: Արհեստավորական և համայնքային դպրոցներ: Առաջին համալսարաններ:
101. Միջնադարյան համալսարանների ձևավորումը 12-13-րդ (Օքսֆորդ, Քեմբրիջ, Լիսաբոն, Սորբոն, Պրահա, Կրակով, Վիեննա):
102. Դպրոցը և մանկավարժական միտքը միջնադարյան Հայաստանում: Մ.Մաշտոցի կյանքն ու մանկավարժական գործունեությունը: Հետմեսրոպյան շրջանի մանկավարժական միտքը (Եգ. Կողբացի, Դ. Անհաղթ, Ա. Շիրակացի):
103. Վերածննդի դարաշրջանի կրթությունը ու մանկավարժական միտքը: Է.Ռոտերդամցի, Վիտտորինո դա-Ֆելտրե, Ֆ.Ռաբլե, Թ.Սոք, Թ.Կամպանելլա:
104. Հայկական վերածննդի դարաշրջանի դպրոցը և մանկավարժական միտքը (10-րդ դարավերջ և 12-ի սկիզբ): Գր. Նարեկացի, Գր. Մագիստրոս, Հովհ. Սարկավազ Իմաստասեր: Հայկական բարձր տիպի դպրոցների և համալսարանների ձևավորումը (Հաղպատ, Անի, Գլաձոր, Տաթև, Սիս, Կապոս):
105. Նոր շրջանի դպրոցն ու մանկավարժական միտքը: Յան Ամոս Կոմենսկի, նրա դերը մանկավարժության որպես ինքնուրույն գիտության կայացման գործում:

106. Ջոն Լոկի փիլիսոփայական և մանկավարժական հայացքները:
107. Ֆրանսիացի լուսավորիչներ՝ Դենի Դիդրո, Կլոդ Ադրիան Հելվեցիուս:
108. Մանկավարժությունը 19-20-րդ դարերում: Ժ.Ժ. Ռուսոյի մանկավարժական հայացքները:
109. Ի.Չ. Պեստալոցցու մանկավարժական գործունեությունը: Ուսուցման ժողովրդադեմոկրատական սկզբունքները:
110. Ի.Ֆ. Հերբարտի մանկավարժական համակարգը: Ավտորիտար դաստիարակության համակարգը: Ուսուցման հոգեբանական մեխանիզմները:
111. Ֆ.Ա. Դիստերվեգի մանկավարժական գործունեությունը և հայացքները: Ջարգացնող կրթության հայեցակարգը:
112. Ֆրյոբելի նախադպրոցական դաստիարակության տեսությունը:
113. Ռ. Օուենի լուսավորչական գործունեությունը:
114. Կ.Դ. Ուշինսկու մանկավարժական հայացքները:
115. Նոր շրջանի հայ դպրոցն ու մանկավարժական միտքը (19-րդ դ.):
116. Խ. Աբովյան, Ղ. Աղայան, Ղ. Ալիշան, Մ. Մամուրյան, Ս. Մանդինյան, Ա. Բահաթրյան, Ռ. Պերպերյան: Դպրոցը Արցախում, հայ գաղթավայրերում:
117. Նորագույն շրջանի արևմտաեվրոպական դպրոցն ու մանկավարժական միտքը: Ռ. Շտայների կյանքն ու մանկավարժական համակարգը:
118. Մ. Մոնտեսորի կյանքն ու մանկավարժական համակարգը:
119. Նոր շրջանի ամերիկյան կրթությունը ու մանկավարժական միտքը: Ջոն Դյուիի մանկավարժական համակարգը:
120. Բ. Բլումի մանկավարժական համակարգը. ուսուցման աստիճանակարգ:
121. Կրթության ազգային համակարգերի ինտեգրացման գործընթացը: Եվրոպական միության կրթական տարածքի ձևավորման գործընթացը /ընդհանուր հետազոտական, կրթական, մշակութային տարածք/:
122. Հետխորհրդային շրջանի կրթական տարածքի ձևավորումը: Ուսուցման գործընթացի հումանացումը:
123. Հետբուհական կրթության հայեցակարգերը:

124. 12-ամյա կրթության համակարգը: Պետական կրթական չափորոշիչների ներդրումը:
125. Բարձրագույն կրթության երկաստիճան համակարգի ներդրումը: ՀՀ-ի ինտեգրումը Բոլոնիայի գործընթացի մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Տ., Մանկավարժություն, Երևան, 2001.
2. Թորգոմյան Լ.Վ., Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005
3. Մանուկյան Ս.Պ. Ընդհանուր մանկավարժություն, Երևան, Զան•ակ-97, 2005:
4. Կոմենսկի Յ.Ա. Մեծ դիդակտիկա, Երևան, 1962:
5. Հարությունյան Գ. Արևելահայ մանկավարժական միտքը 19-րդ դարի 2-րդ կեսին, Երևան, 1978:
6. Հարությունյան Վ., Կոմենսկին և նրա մեծ դիդակտիկան, Երևան, 1970:
7. Շավարշյան Ա. Հայ մանկավարժներ, գիրք Ա, Երևան, 1958:
8. Շավարշյան Ա. Հայ մանկավարժներ, գիրք Բ, Երևան, 1961:
9. Սանթրոսյան Մ. Հայ մեծ լուսավորիչ, մանկավարժ Խ. Աբովյան, Երևան, 1953:
10. Միմոնյան Յ.Ռ., Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության, Երևան, 1953:
11. Միմոնյան Յ.Ռ., Մանկավարժության պատմություն, Երևան, 2007:
12. Վարդումյան Ս.Տ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, 20-րդ դարի մանկավարժական տեսություններ, ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան, 2005:
13. Վարդումյան Ս.Տ., Հարությունյան Լ. և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում, ձեռնարկ մանկավարժների և կրթության կազմակերպիչների համար, Երևան, 2005:
14. Վարդումյան Ս.Տ., Հովհաննիսյան Ա. և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, մասնագիտական կրթություն և մասնագիտական զարգացում, ձեռնարկ մանկավարժների և կրթության կազմակերպիչների համար, Երևան, 2005:
15. Վարդումյան Ս.Տ., Մանկավարժության պատմություն, Երևան, 2008:
16. Байбородова Л.В., Рожков М.И. Теория и методика воспитания. Москва, 2004.
17. Бордовская Н., Реан А. Педагогика. Питер, 2009.
18. Подласый И.П. Педагогика, Москва, 2006.
19. Пидкасистый П.И., Загвязинский В.И., Маленкова Л.И. и др. Педагогика, Москва, 2008.